Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 23.12/[90930]-11

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 7-ԻՆ ԺԱՄԸ 14:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Խորհրդի անդամներ ՝

Ա. Գևորգյան	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար
Վ. Գաբրիելյան	ՀՀ ֆինանսների նախարար
Հ. Թովմասյան	ՀՀ արդարադատության նախարար
Մ. Վարդանյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
Ե. Զախարյան	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ
Կ. Մինասյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ
Ն. Երիցյան	ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ
Լ. Հակոբյան	«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն

Հրավիրվածներ ՝

Ա. Նռանյան	ՀՀ ԱԺ-ի պատգամավոր
Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Լ. Հունանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
Ռ. Վարդանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի տեղակալ
Կ. Բաղալյան	«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

Է. Ավետյան	ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական կառավարման կենտրոն» պետական հիմնարկի տնօրեն
Ա. Բաղանյան	«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ, ծրագրի ղեկավար

1. Ծրագրի կառավարման խորհրդատուի ընտրության կարճ ցուցակի, փոփոխված տեխնիկական առաջադրանքի, բյուջեի և հայտ ներկայացնելու հրավերի հաստատում

(Կ. Բաղալյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հաստատել ծրագրի կառավարման խորհրդատուի ընտրության կարճ ցուցակը, փոփոխված տեխնիկական առաջադրանքը, բյուջեն և հայտ ներկայացնելու հրավերը:

2) հանձնարարել ՀՀ քաղաքաշինության նախարար Վ. Վարդանյանին, ՀՀ ֆինանս-ների նախարար Վ. Գաբրիելյանին և ՀՀ էկոնոմիկայի նախարար Տ. Դավթյանին՝ մեկօրյա ժամկետում ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Մ. Վարդանյանին ներկայացնել գնահատող հանձնաժողովի կազմում ընդգրկվելիք անձանց թեկնածությունները:

2. «Մար-Մոս» ՍՊԸ-ի հետ 2010 թվականի հոկտեմբերի 4-ին կնքված N 02-CS-003 պայմանագրի մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ

(Կ. Բաղալյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հավանություն տալ «Մար-Մոս» ՍՊԸ-ի հետ 2010 թվականի հոկտեմբերի 4-ին կնքված N 02-CS-003 պայմանագրի մեջ փոփոխություններ կատարելու առաջարկին:

3. «Egis Bceom International» կազմակերպության հետ 2010 թվականի սեպտեմբերի 24-ին կնքված N 02 CS 002 պայմանագրի մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ

(Կ. Բաղալյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հավանություն տալ «Egis Bceom International» կազմակերպության հետ 2010 թվականի սեպտեմբերի 24-ին կնքված N 02 CS 002 պայմանագրի մեջ փոփոխություններ կատարելու առաջարկին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ